

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԵՐՐԻՆ



Հանրապետության նախագահ զոր. Էմիլ Լահուտ երկ Ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպի Դըրրին, որուն հետ քննարկեց տեղական, շրջանային եւ միջազգային վերջին իրադարձությունները: Նաեւ խօսակցական երկրորդ ընկերային վիճակին ու պետական ծառայություններու կացութեան մասին, մանաւանդ շեշտը դնելով ելեկտրական հոսանքի ընդհատումին պատճառով քաղաքացիներու առօրեայ կեանքին եւ տնտեսութեան կրած ժխտական անդրադարձներուն վրայ:

Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրրիլին, որ յայտարարեց, թէ խօսած են սահմանադրական կառուցման գործունէութեան եւ պետութեան բոլոր մակարդակներուն վրայ հաշտութեան գործընթացին թափ տալու միջոցներուն մասին:

Երկ նախագահ Լահուտի այցելեցին նաեւ ընդհանուր դատարանի Ատանի Ատուտմ եւ Պետութեան Անվտանգութեան Ուժերու ընդհանուր տնօրէն զոր. Էտուար Մանսուր:

ՄԱՀԱԶԴ

Տիրա իսաչիկ Ֆարանեան
Տիրա Վիգէն Ֆարանեան
Տէր եւ տիկին Բաֆֆի Ֆարանեան
Տիկին Նազելի Քէշիշեան
Տէր եւ տիկին Աւօ Քէշիշեան
Տէր եւ տիկին Վրէժ Սարգիսեան
Ֆարանեան ընտանիք
Մարտիրոսեան ընտանիք
Սարգիս ընտանիք
Կր գուժեն իրենց հօր, եղբոր եւ հարազատին՝

ԳՐԻԳՈՐ ՖԱՐԱՃԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 9 Յունուար 2002ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 10 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Բառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բոլոր նազելի Քէշիշեանի բնակարանը, Արաքս փողոց, Հինգշաբթի 10, Ուրբաթ 11 եւ Շաբաթ 12 Յունուարին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Ուրիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Լեւոն Ուրիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Տիգրան Ուրիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յովսէփ Ուրիշեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կր գուժեն իրենց քրոջ եւ հօրաբորջ՝

ԷԼԻԶ ՈՒՐԻՇԵԱՆԻ (Ծնեալ՝ 1925ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 9 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 10 Յունուար, առաւօտեան ժամը 11:00ին, Պուրճ Համուտի գերեզմանատան մատրան մէջ:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Լեւոն Ուրիշեանի բնակարանը, Անթիլիաս, Հինգշաբթի 10, Ուրբաթ 11 եւ Շաբաթ 12 Յունուարին:

● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել Ազգային Մերանցին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Արաքսի Գազանեան եւ զաւակը՝ Հրայր Տէր եւ տիկին Գէորգ Գազանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարօ Պաքանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Զաւէն Գազանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արտաշէս Գազանեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կր գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆԵԱՆԻ (ՈՒՐՖԱԼԻ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Յունուար 2002ին, Ուաշինկթընի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 5 Յունուար 2002ին, Ուաշինկթընի մէջ:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՐ ԶԱՐՈՒՆԱԿԷ ԱՂՄՈՒԿ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

Ուժանիւթի, փոխադրամիջոցներու եւ հաղորդակցութեան միջոցներու խորհրդարանական յանձնախումբը յառաջիկայ երկուշաբթի օր պիտի քննարկէ ելեկտրականութեան վիճակը եւ այս մարզը վերակազմակերպելու օրինակները:

Յանձնախումբի նախագահ երեսփոխան Մոհամէտ Քապարանի պատմութիւնը, որ յանձնախումբի երկուսն ժողովին ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայունուն հաւաստած է, որ

ելեկտրականութեան տագնապին պատճառով ելեկտրականութեան ընկերութեան նախկին ընդհանուր տնօրէնէն «ժառանգուած» ֆիզիկալ պակասն է:

Թրիփոլիի երեսփոխաններու համախմբումը (Մոհամէտ Մաֆաթի, Մօրիս Ֆատէլ, Մոհամէտ Քապարան) երկ հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ կառավարութիւնը բոլորովին անկարող դարձած է լուծելու ելեկտրականութեան հարցը եւ կառավարութիւնը իր անհամարժեք քայլերով չպատճառէ», ըսաւ ան:

ԻՍԱՍ ՖԱՐԷՍ ԼԱԽԱՏԵՄ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՊԱԳԱՅՈՎ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարես սեռական «Ալ Ուաթան» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը մէջ հաստատեց, որ Լիբանան ճիշդ ուղղութեամբ կ'ընթացայ, նկատել տալով, որ Պէյրութ սկսած է վերագտնել իր երբեմնի դիրքը, որովհետեւ Լիբանան վերադարձած են դեպի ստանդարտները, կը բազմաճանց գրօսաշրջիկները թիր եւ պանդոկները, միջազգային խորհրդածոյովներն ու պատուիրակները, իսկ տիրող ապահովութիւնը ակնհայտ է:

հսկայական գումարներուն եւ մեծ խնտումներուն, չի կրնար հոսանք ապահովել քաղաքացիներուն:

Ելեկտրական հոսանքի ընդհատումը պաշտօնական քաղաքականութիւն դարձած է նախարարութեան եւ ընկերութեան համար, ժողովուրդը հասցնելով կատարելաւ խաւարի վիճակին, ըսաւ համախմբումը, պահանջելով, որ այս հարցը փոխանցուի վերականգնման վարչապետին վերահսկող մարմիններուն, որպէսզի յայտնաբերուին եւ պատժուին յանցաւորները:

Ելեկտրականութեան հարցը լուծելու պահանջող յայտարարութիւններ կատարեցին երեսփոխաններ Պասէմ Եամուր, Մոհամէտ Համար, Էմիլ Էմիլ Լահուտ եւ Սալէհ Խէյր:

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՏԷ ԱՅՑԵԼԵՑ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐԻՆ

Գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ երկ այցելեց մարտիներու Սֆէյր պատարհարքին, ապա յայտարարեց, որ քննարկած են Լեռնայի խաւարի մէջ հաշտութիւններու ամբողջացման միջոցները:

Հարցումի մը պատասխանելով Համատէ քրտաւ, որ քոլոր նախարարները համահասար են, անոնք երբեմն տեղեակ կ'ըլլան իսկ երբեմն ոչ՝ քաղաքական որոշումներէն: «Նախարարները կ'ուզեն, որ իրենց ժողովները սահմանադրութեան հիմամբ քաղաքական բնութիւններուն, եւ նախարարաց խորհուրդի նիստը ընդհանուր տնօրէններու ժողովի չվերածուի, այլ նախարարները իրապէս ըլլան բոլոր հարցերուն մասին եւ մասնակից դառնան քաղաքական, վարչական եւ ապահովական որոշումներուն», ըսաւ ան:

նախարար Համատէ Այսպէս Մարի եւ անոր հետ քննարկեց քաղաքացիութեան նոր օրէնքի նախագիծին Պէյրութի վերաբերեալ հարցը, զօրակցութիւն յայտնելով այս ծրագրին:

Մարի խորհրդարանի նախագահ Նեպի Դըրրի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի տարակարծութիւններուն մասին հարցումի մը պատասխանելով Սալամ ըսաւ, որ այս տեսակի քաղաքական բանավեճերը ցաւալի են եւ վնաս կը հասցնեն երկրին քաղաքական մթնոլորտին, մինչ պետական պատասխանատուները պարտաւոր են երկրին դիմադրուած այս դժուար պայմաններուն մէջ աւելի զբաղուիլ միջոցներ ստեղծելու: Ան ըսաւ, որ պետական պաշտօնեաներու վերջին նշանակումները բանեկցութեամբ յատկանշուած են:

ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Ս. ԾՆՆՈՒԵԱՆ ԽՅՄԱՆ ԳԻՇԵՐ, «Խորհուրդ Սեծ»-ի երգեցողութեան հաւաքուած, քաղաքէն խումբ մը պատանիներ 740,000 Լ. ո. եւ 65 ամ. տողար

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կը յայտնենք մեր ժողովուրդին թէ 2002ի Ս. ԾՆՆՈՒԵԱՆ տնօրէնի օրհնաբաշխ անաբելութեամբ տրուեցաւ հետեւեալ որոշումը:-

Ա.- Լեռնային շրջանները՝ Արժ. Տ. Նարեկ Զինյ. Շահնուան
Բ.- Չալքայի ծովափերէն շրջանը եւ Լէյլաւան՝ Արժ. Տ. Գուրգէն Զինյ. Յովհաննէսեան
Գ.- Ուաշինկթընի շրջանը՝ Արժ. Տ. Սեւակ Զինյ. Վասիլեան:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

«Սեցը եմք մեր Զաւաթը» վաւերագրական CD - տեսերիկները: Ստանալու համար դիմել ԼԵՍԻ կեդրոն (Պուրճ Համուտ), երեկոյեան ժամը 7:00էն ետք: Սահմանափակ թիւ:

Ը. Յ. Ղ. ԼԵՍԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԵՆԵՔ ԵՆԵՔ ՄԵՐ ԶԱԽԱՆԲԸ

«Սեցը եմք մեր Զաւաթը» վաւերագրական CD - տեսերիկները: Ստանալու համար դիմել ԼԵՍԻ կեդրոն (Պուրճ Համուտ), երեկոյեան ժամը 7:00էն ետք: Սահմանափակ թիւ:

Ը. Յ. Ղ. ԼԵՍԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃՆՈՐԸԱԿԱԼԻԶ

Տիկին Երմինէ Թաշճեան եւ զաւակները՝ Յովհաննէս եւ Վարուժան, տէր եւ տիկին տողք. Գասպար Թաշճեան եւ դուստրը, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռագիրով մասնակից եղան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝ ԳԵՂՐԳ ԹԱՇԾԵԱՆԻ մահուան սուգին:

ՄՍԱՅԱՆՔ

● «ԸՆԴՈՒ ՇՈՂԵՐ» Հեղինակ՝ ՆԵՐՍԷՍ ՎԱՆԱԿԱՆ (ՆԵՐՍԷՍ ԱՐԲ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆ) Միաբան Մայր Աթոնոյ Տպարան՝ Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիլիաս, 2001

ԲԱՆՏԱԲՈՐՈՒՄԸ

Տէր եւ տիկին Էլի եւ Թերէյ Սարգիսեան բախտաւորուած են երկրորդ աղջիկ վաւակով մը՝

ԱՐՓԱ

9 Յունուար 2002 Պէյրութ

La Salderie DE LUNETTES

La première au Liban

Authoroute Jdeideh Près Boghos Optic Tél. (01) 871261

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԶՕՐ. ՄԻՇԷԼ ՍԼԷՅՍԱՆԸ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ ընդունեց բանակի ընդհանուր հրամանատար զօր. Միշէլ Սլէյսանը, ինչպէս նաեւ հիւսիսի հոգեւոր առաջնորդներ միւֆթի Թահա Սապունժին եւ առաջնորդներ Էլիաս Քրրպանն, Ֆուատ Համր եւ Էլիաս Ռիաշին: Անոնք ներկայացուցին ապագային միասնութիւնը ամրապնդելու իրենց ծրագիրը, եւ հերթական հանդիպումներու դրոշմը:

Հարիրի նաեւ ընդունեց Եգիպտոսի աշխատանքի նախարար Ահմէտ Ամուին, ներկայութեամբ Լիբանանի աշխատանքի նախարար Ալի Քանսոյի: Ամուին ըսաւ, որ վարչապետին ներկայացուցած է լիբանանցի իր պաշտօնակիցին հետ գոյացած համաձայնութիւնը, դարձնելու համար Լիբանանի մէջ եգիպտացի բանտրներուն ապօրինի պարագաները:

Վարչապետը երկ նաեւ ընդունեց երեսփոխաններ Ժարան Թոքի, Քարիմ Ռասիի եւ Մոհամէտ Տահիայի այցելութիւնները: Տահիա ըսաւ, որ պօրակցութիւն յայտնած է տնտեսական վիճակը բարելաւելու կառավարութեան ճիգերուն:

ԹԱՄՄԱՄ ՍԱԼԱՄ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՄԸՐԻ

Նախկին երեսփոխան Թամմաթ Սալամ երկ այցելեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրի եւ անոր հետ քննարկեց քաղաքացիութեան նոր օրէնքի նախագիծին Պէյրութի վերաբերեալ հարցը, զօրակցութիւն յայտնելով այս ծրագրին:

Մըրի խորհրդարանի նախագահ Նեպի Դըրրի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի տարակարծութիւններուն մասին հարցումի մը պատասխանելով Սալամ ըսաւ, որ այս տեսակի քաղաքական բանավեճերը ցաւալի են եւ վնաս կը հասցնեն երկրին քաղաքական մթնոլորտին, մինչ պետական պատասխանատուները պարտաւոր են երկրին դիմադրուած այս դժուար պայմաններուն մէջ աւելի զբաղուիլ միջոցներ ստեղծելու: Ան ըսաւ, որ պետական պաշտօնեաներու վերջին նշանակումները բանեկցութեամբ յատկանշուած են:

ՎԱՅԱՃԵՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Կիրակի, 13 Յունուար 2002ին, Ս. Յովհաննու - Կարապետ եկեղեցոյ անուանակոչութեան տօնին առիթով, ըստ աւանդութեան, հանդիսաւոր Սուրբ եւ Անճախ պատարագ պիտի մատուցուի:

Պիտի պատարագ եւ մատաղօրհնէ կատարէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՂՍ. ԽԱԶԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին
Ս. պատարագ ժամը 9:30ին
Մատաղօրհնէ եւ հոգեհանգիստ ժամը 11:00ին
Սիրով հրաւիրուած են մեր հաւատացեալ ժողովուրդի բոլոր զաւակները՝ հոգեպէս վերանորոգուելու հոգեպարար արարողութեամբ:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ՎԱՐՉԱՊԵՏ ԵԿԵՂԵՅՐՈՅ ԸՄԱՃԵՆ

THE CULTURAL HOUR @ HAIGAZIAN UNIVERSITY invites you to a lecture on

Opportunities & Constraints: Lebanon in the Regional Economy by

KAREEN PFEIFER, Ph.D Professor of Economics, Smith College Fulbright Scholar

Thursday, January 10, 2002 - 7:00. p. m. HAIGAZIAN UNIVERSITY AUDITORIUM - KANTARI

ՌՈՒՍ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՄԵԿ ԱՄՍՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՉԵՉԵՆ 92 ԶԻՆԵԱԼՆԵՐ ՄՊԱՆՆԱԾ ԵՆ

ՄՈՍԿՈՒԱ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Ռուսական ուժեր 26 շաբաթվա մեջ մեկ ամսուան գործողություններում ընթացքին չեչեն 92 փնտախներ սպանած են, ըստ ռուսական լրատու գործակալությունների, որոնք կրեմլինի բարձրաստիճան մեկ պաշտոնատարին քաղած են իրենց տեղեկությունները:

Սերգեյ Եսաթրժեմպի յայտնած է, թե գործողություններում ընթացքին ռուս 5 փնտախ սպանում է և 24 ուրիշներ վիրաւորում են: Ան ըսած է նաեւ, որ Մոսկուա Անգարային խնդրանք ստացած է՝ ընթացքին բանբեր Մովսիսի Ուտուկովի արտայանձնումի վերաբերեալ թղթածրար մը ունենալու: Կ'ենթադրուի, թե ան գլխաւորաբար Թուրքիայէն կը գործէ:

Եթէ Ուտուկով ձերբակալուի եւ Մոսկուա ղրկուի, ան պիտի դառնայ չեչեն առաջին պաշտօնատարը, որ Ռուսիոյ կ'արտայանձնուի: Եսաթրժեմպի, որ 26 շաբաթվա իրադրութիւն մասին վեկուցող կրեմլինի գլխաւոր բանբերն է, ըսած է, թե 27 փնտախներ ձերբակալուած են Արկուս քաղաքին եւ Սթարի Աթաճի եւ Յոցին-Եուրթ գիւղերուն շուրջ յաջող կերպով աւարտած գործողություններուն ընթացքին:

Մարդկային իրաւանց պաշտպան խմբակներ դատապարտած են 26 շաբաթվա մէջ ռուսական ուժերուն «մաքրագործումի» գործողությունները, յայտնելով, թե փնտախներ սովորական ձեռով, յաճախ կը հաւաքեն գիւղերուն մէջ տղամարդիկ եւ զանոնք կը ծեծեն ու կը չարչարեն:

Պաշտօնատարներ կը հերքեն, թե սիւթեմաթիք կերպով մարդկային իրաւանց բռնաբարումներ կ'արձանագրուին եւ կը յայտնեն, թե կը ձերբակալեն ծանօթ փնտախներ:

Մոսկուա կ'ըսէ, որ իր ուժերը ներկայիս իրենց հակակշիռը հաստատած են 26 շաբաթվա մեծամասնութեան վրայ, սակայն ռուսական ուժեր գրեթէ առօրեայ դարձած փնտախներու յարձակումներու ընթացքին կը սպաննուին կամ կը վիրաւորուին:

ԱԵՌՈՒՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԹԵՐ՝ ՕՍՍԱՆԵԱՆ ԲԵՐԴԻ ՄԸ ՔԱՆԴՈՒՄԻՆ

ՌԻՍ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Մեծամասնութեան օրաթերք մը յաջողակեց Օսմանեան բերդի մը քանդումը՝ քննադատելով Թուրքիոյ բողոքը:

«Օրաթ» օրաթերքը կը գրէր, որ Թուրքիա ապակ չէ խօսելու իսլամական ժառանգին ու անոր յաւիտանման մասին: Օրաթերքը կ'աւելցնէր, որ Մերքէի «Ամիպ» բերդը իսլամական մշակոյթին զլխաւոր երեւոյթներէն չէ եւ թէ անիկ կը իր քանդումի փոքր քանակու համար հաժի յաւիտանմանը իսլամական սրբավայրերը այցելողներուն դիմաց:

ARA TRAVEL IATA
ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
ՈՒՐԱՒՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՒՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ Կ'ԱՊՄԱՆՈՎԵ

ՊԵՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՐՈՒԹ, ԸԱԼԷՊ - ԵՐԵՒԱՆ - ԸԱԼԷՊ
ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ
ARMENIAN AIRLINES ՕԴԱՆԱԲԵՐՈՎ:
• օդանաւային տոմսեր • ապրանքի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱԿԸԼ,
Պուրճ Ըամուտ, Նամակատան շէք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱՇ ՌԱՄԱՏԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ

Իրաքի փոխ նախագահ Թահա Եսահն Ռամատան քննադատեց Միացեալ Նահանգները, որոնք չօրավիզ կը կանգնին իրաքեան ընդդիմադիր գլխաւոր ձակաւորին, դիտել տալով, որ Ուաշինգթըն միջամուխ կը դառնայ իրաքի ներքին հարցերուն:

Ռամատան, որ կը խօսէր սպանական բարձրաստիճան պատուիրակութեան մը ներկայութեան, ըսաւ, որ Ամերիկա դրամ կը վճարէ իրաքի ընդդիմադիրներուն, որոնք Ուաշինգթընի շքեղ պանդոկներուն մէջ կը բնակին: Ռամատան աւելցուց, որ Ամերիկա մարպուտի կեդրոններ բացած է մարպուտ ու փնտախներու ընդդիմադիր ուժերը, ինչպէս նաեւ՝ կոչ կ'ուղղէ անոնց տապալելու: Իրաքի նախագահ Սատամ Հուսէյնն ու անոր կառավարութիւնը: «Ասիկա ՄԱԿի անդամ երկիրի մը ներքին հարցերուն միջամուխ դառնալու ապօրինի արարք մը չէ», հարց տուաւ Ռամատան:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչարտ Պաուլըր Երեքշաբթի օր յայտնած էր, որ նախագահ Ճորճ Գուշի կառավարութիւնը կը շարունակէ գործակցութիւնը իրաքի ընդդիմադիր ձակաւորին հետ, վերահաստատելու համար անոր ֆոնտերը, որոնք ստեղծուած էին հաշուական սխալներու պատճառով:

Ռամատան կոչ ուղղեց արաքական երկիրներուն մեկտնելու իրենց տարակարծութիւնները եւ միասնալու «արաքական աշխարհը շրջապատող վտանգներուն դէմ»: Ան կոչ ուղղեց յատկապէս՝ Իրաքի Ծոցի թշնամիներուն՝ Քուեյթի եւ Սէուտահանան Արաքի, որ մտնուած էր իրաքի չեչեն անդամներուն հետ: Միացեալ Նահանգներու նախարարութեան միացեալ ձեռքով իրաքի ներքին հարցերուն միջամուխ դառնալու ապօրինի արարք մը չէ, հարց տուաւ Ռամատան:

ՂԱԶԱԽՍԱՆ

9600 ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ ԱԶԱՏ ՊԻՏԻ ԱՐՁԱԿՈՒԻՆ

ԱՍԹԱՆԱ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Զագախտանի խորհրդարանը Զորքաբեր Օր թեր թուէրկեց օրինագիծի մը, որուն շնորհիւ երկրին խնդրուած բանտերէն ազատ պիտի արձակուին 9600 բանտարկեալներ: Զագախտանի անկախութեան 10ամեակին առիթով:

Արդարագաւորութեան փոխ նախարար Նիքոլայ Պելորուքով երեսփոխաններուն յայտնեց, թէ խորհրդարանին մէջ կայացած թուէրկութեան իրբեւ արդիւնք ներում պիտի շնորհուի բանտարկեալներուն: Զագախտանի բանտերը, որոնք 62,000 բանտարկեալի հաշուով կառուցուած են, ողորդուած են 72,000 բանտարկեալներով:

Մարդկային իրաւանց պաշտպան յանձնախումբեր խիստ կերպով կը քննադատեն Զագախտանի բանտերուն մէջ տիրող ահաւելի վիճակը: Շատ մը բանտարկեալներ իրենց բանտարկութեան ընթացքին կը վարակուին թոքախտէ եւ այլ հիւանդութիւններէ:

Մարդկային իրաւանց պաշտպանութեամբ զբաղող կազմակերպութիւններ երկրին օրէնքները խիստ կ'որակեն:

ԱԶԱՏԱՄԱՐՏ ԱԿՈՒՄԲ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՃԵԼԻ ԵՐԵԿՈՆԵՐ

Ազատամարտ ակումբը, Հինգշաբթի Յունուար 10էն սկսեալ եւ ամէն Հինգշաբթի ժամը 8:00էն ետք կ'ընդունի իր քարեկամները եւ ազգայինները աղանդերի ճոխ սեղանի շուրջ: Համեղ ուտելիք, հում եւ պատրաստուած մսերէն եւ խմորեղէն (30 տեսակ): Խմիչքի գանգան տեսակներ՝ յարմար գինեղով:

Կարելի է նախապէս ապահովել սեղանները հեռաձայնելով Ազատամարտ ակումբ 01/449924:

Կարելի է նաեւ ապահովել ապսպրանք ձեր տուններուն կամ հաւաքներուն համար:

Չորս տարիէ ի վեր Մուսայի հանգամանքով արաք պաշտօնատար մը իրաք չէ այցելած: Նախարարութեան բանբերը ողջունեց Մուսայի այցելութիւնը, դիտել տալով, որ ան ծանօթ է արաքական միասնականութեան թափ տալու իր ճիգերով: Սակայն բանբերը չըսաւ, թէ Մուսա ինչո՞ւ իրաք պիտի այցելէ:

ՄԱԿի բարձրաստիճան պաշտօնատար Պեանու Սեւան իր կարգին յայտնեց, որ իրաքի չեչեն անդամները իրաք պիտի այցելէ: Սեւան 16 ամիսէ ի վեր Պաշտատ չէ այցելած: Սեւան գործադիր տնօրէնէն է ՄԱԿի «քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագիրին: Ան ըսաւ, որ իրաք պիտի այցելէ արժեւորելու համար ծրագիրին գործողութիւնը, որ դժուարութիւններու կը բախի:

ԻՐԱՔԻ ՂԵՄ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ ԳԱՅՅ

Գերմանիոյ պաշտպանութեան նախարար Ռուտոլֆ Շարփին կ'այցելուի Մուսայի յայտնեց, որ ահաբեկչութեան դէմ կայանուած միջազգային ձակաւոր իրաքի դէմ յարձակում մը չի ծրագրեր Աֆղանիստանէն ետք:

ՄՈՒՍԱ ԵՒ ՄԱԿԻ ՊԱՏՈՒՐԱԿ ՄԸ ԻՐԱՔԻ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԵՆ

Մուսայի Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա այս ամսուան մէջ իրաք պիտի այցելէ, հաղորդեց արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը: Ան աւելցուց, որ ետքայ այցելութիւնը պիտի սկսի 18 Յունուարին:

ՄԻԼՈՇԵՒԻՉ ԴԱՐՉԵԱԼ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ԼԱ ՅԵՅԻ ԱՏԵԱՆԸ

ԼԱ ՀԵՅ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Եռակուսի Նախկին նախագահ Մլոպոտան Միլոշեւիչ Զորքաբեր Օր դարձեալ քննադատած է Լա Յեչի պատերազմական ոճիրներու ատենանը՝ Քոսովոյի մէջ տեղի ունեցած ոճիրներու ամբաստանութեամբ իր դատավարութեանէն առաջ, ատենանի վերջին նիստին ընթացքին:

Դատավարութիւնը պիտի սկսի Փետրուար 12ին: Միլոշեւիչ սերպերէն խօսելով յայտնած է, թէ ՕԹԱՆը եւ ինչ թէ Պեկրատն է իսկական յանցաւորը: Արեւմտեան գինակցութիւնը 1999ին Սերպիան ռմբակոծած էր, սերպերու կողմէ Քոսովոյի այլապահներուն դէմ բռնարարները կ'սկսէր:

Միլոշեւիչ եւ բարձրաստիճան սերպ 4 պաշտօնատարներ ամբաստանուած են Քոսովոյի 900 ալպանացիներու սպանութեամբ եւ 800 հազար քաղաքայիններու իրենց տուններէն արտաքուստումով:

ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ՝ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ԼԵՏ ԻՐ ԹՇՆԱՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍԿՈՒ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Հիւսիսային Քորէա Զորքաբեր Օր պահանջած է, որ ամերիկեան ուժերը անմիջապէս իսկ մեկնին Հարաւային Քորէայէն, Ուաշինգթընի եւ Փրինկեանի միջեւ բանակցութիւններու վերսկսելու համար:

Համաձայն Հիւսիսային Քորէա նաեւ մերժած է ընթացք տալ բանակցութիւններու գծով ամերիկեան հետեւողական կոչերուն:

Փրինկեանի Մ. Նահանգները յայտնած է Քորէական թերակղզիին կէս դարու բաժանումին եւ անցեալ տարի Հիւսիս - Հարաւ յարաբերութեանց ստեղծմին համար, 2000 թուականին բարգաւաճող կապերէ ետք:

Անիկա շեշտած է, որ «նախ քան որեւէ այլ բան», ամերիկեան 37 հազար զինուորները պէտք է հեռանան Հարաւային Քորէայէն:

Հարաւային Քորէայի արտաքին գործոց նախարար Հան Սէնկ - Սու յայտնած է, որ Սէնկ մեծ ճիգեր ի գործ պիտի դնէ օժանդակելու համար Մ. Նահանգներու, որ Հիւսիսային Քորէայի հետ բանակցութիւնները վերսկսին:

ԿԻՊՐՈՍԸ՝ ԶԻՒՆԻ ՆԵՐՔԵՒ

ՆԻԿՈՍԻԱ, 9 (ՌՈՅԹԸՐԸ)- Միջերկրական ջերմ կլիմայով յատկանշուող կղզիին՝ Կիպրոսի մէջ եւս ձիւնեց: Զերմաստիճանը կիպրոսի մէջ հասած է -5ի: Ցուրտին եւ ձիւնեւուն պատճառով փակուած են աւելի քան 60 վարժարաններ եւ գարմացուցած են արեւուն շողերը փնտոող գրօսաշրջիկները:..

«Կիպրոս եկած էինք արեւուն ճառագայթները վաշելու, սակայն հիմա ձիւնեւուն մէջ մխրճուած ենք», ըսաւ բրիտանացի գրօսաշրջիկ մը, որ կը գտնուէր Հաւանաքայի հարաւ գտնուող Լէֆթարա գիւղաքաղաքին մէջ:

Կիպրոսի բնակիչները յայտնեցին, որ 1991էն ի վեր այս ձեւով չէ ձիւնած:

Օդերեւութարանական կեդրոններու տեղեկութեանց համաձայն՝ կղզին շրջապատող հիւսիսային պող քամին վերջ պիտի գտնէ Հինգշաբթի օր:

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Չեր ինքնաշարժիմ պենզին, մագլորիմ, իւղիմ, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ցերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՄՅԵԼԻ գրասենեակ, Պուրճ Ըամուտ
- Կամ ազգային գրախանութ, Պուրճ Ըամուտ
- Գրատուն Caravelle, Զալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիպիա

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Սազուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱԸ ԶՐԻՈՐԵՆ

ՎՐԺԷՔԱՌՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

Հրամանատար Մամուլ

ՀԸՉՊԱԼԼԱ ԿԵ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԵՐԻՒՐԱՆՔՆԵՐՈՒՆ

Հրգպալա պատասխանեց իր դէմ շղթայագրած-ուած իսրայէլեան դիւա-նագիտական եւ լրատ-ւական արշաւին՝ հաս-տատելով, որ իսրայէլ կը ստեղծէ սուտեր եւ երե-ւակայական պատմու-թիւններ՝ քողարկելու համար գրաւեալ Պաղես-տինի մէջ տեղի ունեցող դէպքերը: Յիշեցնենք, որ իսրայէլ կարմիր ծովուն մէջ դրաւած էր գէնք փո-խարդող «Քարիմ Ա» նա-ւը:

ունեցող իրադարձու-թիւններու մանրամաս-նութիւններուն քննար-կումէն՝ այս մէկը կը զուգահեռի նաեւ այն երեւոյթին, որ ամբողջ-ցի պատուիրակ զօր: Ան-թոնի Ձիւնի մնայուն հան-դիպումներ կ'ուսնայ քննարկելու համար քա-ղաքական բանակցու-թիւններ սկսելու կարե-լիութիւնները, երկու կողմերուն միջեւ ապա-հովական նախագիծը դնելէ ետք:

«Այս անգամ իսրայէլ կ'ուզէ բոլոր զբաղեցնել «Քարիմ Ա» նաւուն նիւ-թով, որ ոչ մէկ ձեռով իրականութեան կը հա-մապատասխանէ՝ գէնքե-րով եւ ռազմական սար-քերով ընդունած ըլլալու իմաստով:

ՄԱՆՍՈՒՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Պատասխանը տրուե-ցաւ «Դիմադրութեան Հաւատարմութիւն» երեսփոխանական կ'ա-նմբակցութեան անդամ Խրեմիտիան Նեգիհ Մանսուրի կողմէ, որ «Անուար»-ին յայտնեց:

«Իսրայէլեան այս յե-րուրանքը նորութիւն չէ մեզի համար. դիմադրու-թիւնը եւ պայքարը սիո-նական այս բռնակալ պե-տութեան հետ առկայ են բոլոր մակարդակներուն վրայ եւ իսրայէլեան թշնամին մերթ ընդ մերթ կը ստեղծէ սուտեր եւ երեւակայական պատ-մութիւններ՝ ամբաստա-նելու համար այսինչ կ'ա-նամ այսինչ կողմը, մա-նաւանդ՝ երբ նեղ կա-ցութեան մը մէջ կը գտնուի կազմի եւ Արեւմտեան Ափի մէջ տե-ղի ունեցող իրադարձու-թիւններուն պատճառով: Իսրայէլ այս մէկը կը կա-տարէ ուշադրութիւնը շեղելու համար պաղես-տինեան իշխանութեան շրջաններուն մէջ տեղի

ԳԱՅԼԻՆ ԵՒ ԳԱՌՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


«Այս ամբողջ ստարա-նութիւնը կը հաստատէ մեր բաժնեւորուն ճշգու-թիւնը: Իսրայէլեան սուտն ու յերիւրանքը այլեւս ոեւէ մէկուն հա-մար զաղտնիք չեն, եւ այս յերիւրանքով պատ-մութիւնը նման է գայլին եւ գառնուկին պատմու-թեան, երբ անոնք հան-դիպեցան գետափին: Գայլը ամբաստանեց գառնուկը այն յանցան-քով, որ ինքն է գետի ջու-րերուն՝ ապականման պատասխանատուն է: Գառնուկը պատասխանե-լով ըսաւ. «Ի՞նչպէս կա-րելի է այս մէկը, երբ դուն լուրը կը խմես հո-սանքին վերէն, իսկ ես՝ վարէն»:

«Ատոր համար ալ կը կարծենք, որ իսրայէլեան յայտարարութիւնները այս հարցին մէջ Հրգպալ-լայի դերակատարու-թեան առկայութեան մա-սին, մեր կողմէ ամբող-ջութեամբ մերժուած յայ-տարարութիւն մըն է»:

ՄՈՒՍԵՏ ԽԱԼԻԼ ՍՈՒՊԱՆ
«Անուար»

2001Ը ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ԸԱՍԱՐ ԴԾՈՒՄԱՐ ՏԱՐԻ ՍՈՆ ԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ ԵՂԱԾ ԱՐԴԻՒՆՔԸ ՉՏՈՒՆ ԵՒ ԱՌԵՏՈՒՐԸ ԱՌՁԻ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՂ ԴԱՏԱՍԱՐ 30 ԱՌ ՀԱՐԻՐ ԵՏԴԱՐՁ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ

Գիները կրնան տարբերիլ Պար-պուրի եւ Վերտանի, Համարյի եւ հարաւային արուարձաններուն եւ կամ Պէյրութի, Թրիփոլի, Սայտա-յի եւ միւս շրջաններուն մէջ, սա-կայն լիբանանցի բոլոր առեւտրա-կանները կը կարծեն, թէ նոյնիսկ եթէ գիները նոյնը չըլլան, 2001 տար-ին եղաւ առեւտրական մարզի ամէնէն դժուար եւ գէշ տարինե-րէն:



Առեւտրականները երկար սպա-սեցին անցեալ տարուան սկիզբը նոր կառավարութեան տուած խոս-տումներուն իրագործման: Կառա-վարութիւնը խոստացած էր զանա-զան ձեւերու դիմել տնտեսական իրավիճակը փոխելու, քարացած տնտեսութիւնը վերակենդանացնե-լու եւ Լիբանանի վիճակը փրկելու ու բարելաւելու՝ գայն կրկին վե-րադարձելով իր նախկին առեւտր-ական կեդրոնի հանգամանքին:

Ներածուած արտադրութիւններուն վրայ տուրքե-րու նուազեցում, տուրքերու եւ առեւտրի վերա-բերող նոր օրէնքներ, ֆրանսախօս երկրներու մի-ջազգային վեճաժողով, միջազգային համագումար՝ Լիբանանի տնտեսութեան վերակենդանման աշխա-տանքներուն օժանդակելու համար (Փարիզ 2) ... եւ այլ նախաձեռնութիւններ պէտք է կատարուէին, որ-պէսզի Լիբանանի տնտեսութիւնը որոշ չափով բա-րելաւուէր. սակայն անոնք չիրականացան:

«Ատոր համար ալ կը կարծենք, որ իսրայէլեան յայտարարութիւնները այս հարցին մէջ Հրգպալ-լայի դերակատարու-թեան առկայութեան մա-սին, մեր կողմէ ամբող-ջութեամբ մերժուած յայ-տարարութիւն մըն է»:

11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքներէն ետք, աւելի բարդացաւ շրջանային իրավիճակը եւ աւելցան ժողովուրդին հոգերը, ստատեսական վիճակը ընդհան-րապէս եւ առեւտրական մարզը յատկապէս վատթա-րացան՝ պատճառ դառնալով, որ Լիբանանի զբօսա-շրջութիւնը զգալի ետդարձ արձանագրէ:

Առեւտրականները «Սաֆիր» օրաթերթի թղթակի-ցին ըսած են, թէ առջի տարուան բաղադրամամբ, անց-եալ տարի առեւտրի բնագաւառը 30 առ հարիւրով ետդարձ արձանագրած է. անոնք նշած են, թէ ար-դէն առջի տարի վիճակը գէշ էր:

Առեւտրականները կը կարծեն, թէ ապագան աւե-լի գէշ ըլլալու է: Անոնք ըսած են, թէ անցեալ տարին զրական տրամադրութեամբ սկսաւ եւ աւարտեցաւ աւելցած արժէքի տուրք դնելու օրէնքով, իսկ ինչ-պիսի տարի մը կարելի է սպասել, երբ անիկա սկսաւ նոր տուրքերով, աւելի եւս սնանկացնելով ժողովուրդ-դին տնտեսական եւ ընկերային վիճակը եւ նուազեցը-նելով անոնց գնելու կարելիութիւնը:

Հակառակ տարուան աւարտին իրարու յաջորդող սունական օրերուն, որ որոշ չափով բարելաւեց սա-ռած առեւտրական մարզը, առեւտրականները կը կարծեն, թէ այս մէկը դրական ցուցանիշ չի համար-ւիր այս տարուան առեւտրի համար, մանաւանդ որ սունական օրերուն ընթացքին ժողովուրդը անհը-րաժեշտ գնումները կատարեց՝ վախճալով այս տար-ւան ընթացքին տուրքերուն պատճառով գիներու բարձրացումէն:

Մար էլիտա շրջանի Առեւտրականներու Միութեան տնօրէն Ատնան Ֆաբհանի ըսած է, թէ 2001ը հակա-սութեան տարի մը եղաւ՝ դրական հիմնական փոփո-խութեան (որ խոստացուած էր կառավարութեան կողմէ եւ որ անհրաժեշտ էր երկրին քայքայուած տնտեսութիւնը փրկելու համար), եւ տնտեսական ժխտական իրավիճակին միջեւ, որով փակուեցաւ 2001 տարին՝ ժառանգ ձգելով յաւելեալ տուրքեր:

Իր խօսքը շարունակելով Ֆաբհանի ըսած է, թէ անցեալ տարուան սկիզբը տրամադրութիւնները ընդ-հանրապէս դրական էին, որովհետեւ կառավարու-թիւնը խոստացած էր զանազան քայլեր առնել՝ առե-ւտրը քաջալերելու եւ այդ մարզին մէջ դիւրութիւն-ներ ստեղծելու համար: Այս տրամադրութիւնը առ-կայ էր նաեւ ժողովուրդին մօտ, որ կը սպասէր տնտե-սական վիճակի բարելաւման: Սկզբնական շրջանին կառավարութեան առած քայլերը յաւելեալ յոյս արթնացրին ժողովուրդին մէջ: Ամբողջ աւելցան նա-եւ արար եւ այլ այցելուները, որոնք Լիբանան եկած էին գնումներ կատարելու, համաձայնագիրներ կնքե-լու եւ ամառը անցրելու համար: Անոնք տարիներէ ի վեր շրջան չէին այցելած: Այդ ամիսները եղան դրա-կան ցուցանիշ մը, որ լաւ օրերու յոյս կը ներշնչէր, հակառակ անոր որ այդ շրջանին կային քաղաքական ներքին հարցեր եւ խնդիրներ, որոնք կրնային խոչըն-դոտել տնտեսութեան զարգացումը:

Ֆաբհանի աւելցուցած է, թէ 11 Սեպտեմբերի ահա-բեկչական արարքներէն ետք, հազիւ Լիբանան կը սկսէր ոտքի ելլել, եկաւ աւելցած արժէքի տուրքի որ-դեգրումը, որ ամբողջովին քարացուց լիբանանեան շուկան: Կառավարութեան տուած բարելաւման խոս-տումին, տուրքերու նուազեցումին եւ Լիբանանի տնտեսական վիճակը փրկելու համար քայլեր առնե-լուն յաջորդեց աւելցած արժէքի տուրքը: Ըստ Ֆաբ-հանի, եթէ կառավարութիւնը ստիպուած է այս տուրքը դնելու, միւս կողմէ ան կրնայ լուծուածներ

գտնել՝ լիբանանեան տնտեսութիւնը ոտքի պահելու եւ առեւտրականներն ու արհեստաւորները քայքա-յումէն եւ սնանկութենէ հեռու պահելու համար:

Ֆրանսիացի շրջանի Առեւտրականներու Միու-թեան տնօրէնը ըսած է, թէ 2001ը առեւտրական մար-զի նահանջի տարին էր:

Ան կը կարծէ, թէ այս տարի աւելի լաւ պիտի ըլլայ առեւտրական մարզին մէջ, մանաւանդ որ կը նախա-տեսուի, որ այս տարուան ընթացքին Լիբանան մի-ջազգային կազմակերպութիւններու մաս կազմէ եւ միջազգային կարեւոր համագումարներու մասնակ-ցի:

Համարյի շրջանի Առեւտրականներու Միութեան նախագահ Քոլ Այանեանի կարծիքով, այս տարին անակնկալներու տարի մը եղաւ առեւտրի մարզին մէջ: Չանազան հաստատութիւններ իրենց դռները փակեցին, ուրիշներ սնանկացան եւ իրենց պաշտոն-եաները մնացին առանց գործի:

Փ. Այանեան յիշեցուցած է, թէ քանիցս միութիւնը կող ուղղած էր այս վիճակը հետապնդելու եւ բարե-լաւման ձեւեր գտնելու: Ան նշած է, թէ հակառակ կարգ մը քայլերու եւ նախաձեռնութիւններու, 2001 տարին գանազան պատճառներով եղաւ ամէնէն վատ տարիներէն մէկը:

Այլ պատասխանատու մը՝ Մուսթաֆա Սըննու ըսած է, թէ անցեալ տարին եղած է առեւտրական մարզի ամէնէն դժուար եւ գէշ տարիներէն: Ան աւել-ցուցած է, թէ այս տարուան ընթացքին կը նախա-տեսուի կարգ մը հարցերու լուծումներ գտնել, հա-մաձայնագիրներ կնքել եւ քայլեր առնել տնտեսու-թեան աշխուժացման համար:

Պարպուր շրջանի Առեւտրականներու Միութեան նախագահ Ռաշիտ Քրպպէ այլ կարծիք ունէր: Ան ըսած է, թէ 2001 տարին 1999էն աւելի լաւ էր՝ ծախ-ւած ապրանքներու ցուցանիշը նկատի առնելով: Ըստ անոր, որոշ շարժում կար շուկային մէջ, բան մը, որ յաւելեալ յոյս ներշնչեց առեւտրական վաճա-րատներուն եւ հաստատութիւններուն: Ան նշած է, թէ ատոր պատճառը կառավարութեան առած քայ-լերն էին: Ռ. Քրպպէ աւելցուցած է, թէ 2001ը պէտք է բաժնել երկու մասի առաջին 6 ամիսներուն ընթաց-քին առեւտրը տկար էր, իսկ երկրորդին՝ աւելի շար-ժում կար եւ այցելուները թիւի յաւելում: Քրպպէ լաւատես է նաեւ այս տարուան առնչութեամբ:

Այսպէս առեւտրականները կը գնահատեն 2001 տարին. սպասուած դրական ցնցումին փոխարէն՝ անոնք ժխտական երեւոյթներու դէմ յանդիման գտնուած են: Սակայն հակառակ խանութներուն մէջ դիզուած արտադրութիւններուն, առեւտրականնե-րը յաւելեալ ապրանք ապահոված են՝ վախճալով աւելցած տուրքերէ: Անոնք ընդհանրապէս տակաւին յոյս ունին եւ կը կարծեն թէ աւելի լաւ ապագայ մը կարելի է ունենալ, հակառակ անոր որ անոնց մեծա-մասնութիւնը համոզուած է, թէ վիճակը չի կրնար բարելաւուիլ:

ՆԵՏԻՐ ՍԱՊՊԱՆ
«Սաֆիր»
(Յապաւուած)
www.lemagan.com

ԶՈՒԳԱՀԵՌ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԵՂԾՈՂ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Երբ որ պետութիւնը կը ծնի հակամարտ գու-գահեռ իշխանութիւն-ներ, որոնք կը վերած-ւին քաղաքացիներու եւ կի-սանկախ պետութիւններ-րու, որոնց վրայ չի բարձրանար որեւէ օրէնք եւ սահմանադրու-թիւն, այն ժամանակ իրավիճակը աւելի մօտ կ'ըլլայ իրանական պե-տութեան պատկերին: Ո՛չ պետութիւնը պետու-թիւն է, ո՛չ կառավարու-թիւնը՝ կառավարու-թիւն, ո՛չ ալ քաղաքային իշխանութիւնները՝ իշ-խանութիւններ: Այսու-հանդերձ գուգահեռ իշ-խանութիւնները կը շա-րունակեն իրենց գլուխ-ներուն վրայ դրած մնալ պետութեան «գլխարկ»ը,

եւ կը շարունակեն իրենց ընթացքը առանց որեւէ հսկողութեան եւ հաշուե-տուութեան:

Օրինակները բազմա-թիւ են՝ սկսելով աշխա-տանքի նախարարի ընկե-րային ապահովութեան հիմնադրամի մարզին մէջ կատարած յայտա-րարութիւններէն, մինչ-չեւ «գաղտնի սպասար-կութիւններ»-ու քանցու-նը, որ մերթ զմերթ կու-տայ մամուլի եւ հրատա-րակութիւններու օրէնք-քին մէջ իր յայտարարու-թիւններով կը շրջանցէ տեղեկատուութեան նա-խարարութեան եւ իրա-ւասութիւնները, մերթ կը իջէ ձայնագրուած ժապաւէններ (որոնք եր-կար ժամանակ ի վեր կը

գտնուին շուկաները), ինչպէս նաեւ ժապաւէն-ներ, որոնք գոյութիւն ունին այս քանցու-նեցողութեան շատ առաջ եւ անոնցմէ շատեր շու-կաները կը գտնուին 3 տասնամեակներէ ի վեր, եթէ ոչ աւելի:

Կան նաեւ ուրիշ օրի-նակներ, որոնցմով կը զարմացնենք օտարները. պետութեան մէջ բանա-վէճ՝ արաբական վեճա-ժողովին շուրջ: Այլազան ազդակներ կը միջամտեն հարցին մէջ: Արդիւնքը՝ լիբանանեան պետու-թեան խնդիրը «դիմա-գիծը»: Ոմանք վեճաժո-ղովի Լիբանանի մէջ կա-յայցման հետ, ուրիշներ անոր դէմ: Բանալէճ մը, որ կրնայ որեւէ մէկ ժա-մանակ պայտիլ Արաբա-կան Լիգայի եւ պետու-թեան մէկ մասին միջեւ: Ինչպէս նաեւ արաբա-կան պաշտօնակաւ շրջա-նակներու մօտ ծաւալած խօսակցութիւն, որ Լի-բանանի համար արգիւ-ւած է արաբական վեճա-ժողովի մը հիւրընկալու-մը այս արագութեամբ ժամանակը տակաւին չէ հասած:

Միայն ինքնակոչ պե-տութիւններու ժամանա-կը կը հասնի միշտ, իսկ պետութեան ժամանակը վստահարար տակաւին չէ հասած:

Ա Յ Ի Լ
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ
ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$
●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈՒՍԱՂՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՉՐԻ
ՀԱՍՅԷ.- ԱՅԷՏԻ ԶԵՆԲ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557
ԱԼԻ ՀԱՍՅԷ
«Ն ա հ ա ր»

Կնոջական

ԱՅԼԱԶԱՆ

ՄԵԾ ՄԱՅՐԻԿՆԵՐ
ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐՆԵՐՈՒՆ ՄԵՁ



Խաղի պահույն:

